Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ՍԾ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 16. Սյունիքի մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by MKHITARYAN YERVAND 2508730335
Date: 2024.07.08 15:36:16 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում Կապան և Սիսիան համայնքներում ծառայությունից օգտվել է 76 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 37 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
    - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 24 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող նկարչական, շյուղագործության և շաշկու խմբակներին:
    - Ճաշարանի 58 շահառու մասնակցել են կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
        - Ծննդյան օրերի նշում
        - Միջոցառում նվիրված Սուրբ Զատկի օրվան
        - Միջոցառում նվիրված հայոց ցեղասպանության զոհերին
        - Միջոցառում նվիրված Հաղթանակի օրվան
        - Միջոցառում նվիրված Հանրապետության օրվան
        - «Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օր»

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Միջոցառում նվիրված ցեղասպանության զոհերին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/mciudj),
- «Մայիսի 9» (տե՛ս հետևյալ հղմամբ՝» http://surl.li/pexctk ),
- «Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օր» (տե՛ս հետևյալ հղմամբ՝http://surl.li/oeluce ),
- Առօրյան Կապանի ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝http://surl.li/ydgcbk)

- Ստեղծագործում են տարեցները (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/bfkqvt)

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Կապան և Սիսիան համայնքների սոցիալական աշխատողները մասնակցել են «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին, որի ընթացքում ուսումնասիրվեցին սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը, նպատակներն ու խնդիրները: Քննարկվեցին սոցիալական դեպքերի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և ընթացիկ աշխատանքները: Սիսիանի և Կապանի սոցիալական աշխատողները հանդիսանալով ՄՍԾՏԿ-ում համակարգվող նիստի անդամ, ակտիվ մասնակցություն են ունեցել համակարգող խորհրդի նիստերին, որտեղ քննարկվել է համայնքի նպաստառու չհանդիսացող, սակայն աջակցության կարիք ունեցող շահառուների դեպքերը, ուսումնասիրվել եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու համար ներկայացված դիմումները, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրման ենթակա դեպքերը:

Սիսիան համայնքի սոցիալական աշխատողը իր աջակցությունն է ցուցաբերել քաղաքում կազմակերպված «Ծաղրածուներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության Իսպանիայի թիմին, Սիսիանում հետաքրքիր և զվարճալի միջոցառում իրականացնելուն:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 76/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 43 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 26 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 20 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 8 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 18 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 49 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 75 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում | 58 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)